ՀՀ գիտության կոմիտեի 2020 թվականի գործունեության

ամփոփ հաշվետվություն

2020 թ. ընթացքում ՀՀ գիտության կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե) իր գործունեությունն իրականացրել է հետևյալ ուղղություններով.

1. Իրավական ակտերի մշակում և ոլորտի բարեփոխումներ

1.1. Գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրման նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ. ապրիլի 3-ի N 414-Ա/2 հրամանով հաստատվել է Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը: Ծրագրի շրջանակներում 2020 թվականին ներդրվել են նոր դրամաշնորհային ծրագրեր, որոնց արդյունքում ֆինանսավորման են երաշխավորվել գիտական խմբերի մեկնարկի աջակցության և գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդմանն աջակցության 8 և 11 գիտական թեմաներ (առաջին միջոցառման ֆինանսավորման շրջանակում ՀՀ է վերադարձել մեկ երիտասարդ գիտնական): Մրցույթների նպատակն է աջակցել երիտասարդ գիտական ղեկավար ունեցող նոր ձևավորվող և արդեն ձևավորված խմբերին՝ հավակնոտ և միջազգային չափանիշներին համապատասխան հետազոտությունների իրականացման և միջազգային համագործակցության ընդլայնման համար:

1.2. Մշակվել է ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի» 2021-2023 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2020 թ. հուլիսի 10-ի N 1212-Ն որոշմամբ:

1.3. Երկրի տնտեսության պահանջներից բխող, ինչպես նաև երկակի նշանակության բարձր տեխնոլոգիական մրցունակ արտադրանքի ստեղծմանն ուղղված հետազոտությունների խթանման նպատակով 2020 թ. իրականացված Երկակի նշանակության ծրագրերի իրականացման աջակցության և կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի մրցույթների պայմանները բարելավվել են, մասնավորապես, բարձրացվել է հետազոտական խմբի միջին ամսական աշխատավարձը: 2020 թ. երկակի նշանակության ծրագրերի իրականացման աջակցության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված թեմաների քանակը նախորդ մրցույթի թեմաների քանակի համեմատ աճել է 2.5 անգամ, հաշվարկային ամսական աշխատավարձը աճել է մինչև 50 000 ՀՀ դրամով և ֆինանսավորման ընդհանուր ծավալը ավելացել է 500 000 ՀՀ դրամով, իսկ կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի հայտերի մրցույթի շրջանակներում հաշվարկային ամսական աշխատավարձը աճել է մինչև 30 000 ՀՀ դրամով:

1.4. 2020 թ. ներդրվել է նոր դրամաշնորհային ծրագիր՝ ուղղված «Արհեստական բանականություն և տվյալագիտություն», «Քվանտային տեխնոլոգիաներ», «Ռոբոտատեխնիկա» մասնագիտություններով գիտական թեմաների աջակցությանը: Մրցույթի արդյունքում 36 ամիս տևողությամբ դրամաշնորհներ են տրամադրվել 3-5 անձից բաղկացած 7 գիտահետազոտական խմբերի կողմից ներկայացված թեմաների իրականացման համար:

1.5. ՀՀ պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման և օտարերկրյա պետություններում գտնվող բարձր վարկանիշ ունեցող հայազգի գիտնականներին ներպետական ծրագրերում ներգրավելու նպատակով 2020 թվականին ՀՀ գիտության կոմիտեի կողմից կազմակերպվող դրամաշնորհային մրցույթներում ներդրվել են՝

ա) գիտական թեմաների իրականացման ավարտից հետո արդյունքային ցուցանիշների առկայության դրույթը. թեման իրականացնողները պետք է ապահովեն միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում բարձր վարկանիշ ունեցող հրապարակումներ: Այս պայմանի չկատարելը/կատարելը կազդի հետագայում Գիտության կոմիտեի հայտարարած մրցութային ծրագրերին գիտահետազոտական խմբի անդամների կողմից ներկայացված գիտական թեմաների փորձագիտական գնահատականի վրա.

բ) օտարերկրյա գիտական կազմակերպություններում գիտահետազոտական գործունեություն իրականացնող գիտական խորհրդատուի առկայության դրույթը, որի շրջանակներում գիտական թեմայի իրականացման ժամանակահատվածում կազմակերպվելու են փոխայցելություններ գիտական խորհրդատուի և գիտահետազոտական խմբի անդամների միջև:

գ) մրցույթի պահանջներով երիտասարդ մասնակցի համար սահմանված տարիքային շեմը կարող է ավելանալ երեխայի խնամքի արձակուրդի դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար՝ հավելյալ 1 տարով, իսկ ՀՀ զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ հավելյալ 2 տարով:

2. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման նպատակով մրցույթների կազմակերպում

Մրցույթը	Հայտարարման ժամկետը	Ներկայացված հայտերի քանակը	Ֆինանսավորման երաշխավորված թեմաների/ծրագրերի թիվը	
2019 թ. հայտարարված մրցույթների արդյունքների ամփոփում				
1. ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթ	2019 թ. օգոստոս	220	98	Ֆինանսավորումը տրամադրվում է 2020 թ. մարտ ամսից, 12 ամիս ժամկետով:
2. ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում	2019 թ. օգոստոս	69	24	Ֆինանսավորումը տրամադրվում է 2020 թ. մարտ ամսից, 12 ամիս ժամկետով:

ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթը				
3. ՀՀ գիտության կոմիտեի և գիտական հետազոտությունների աջակցության եվրասիական ասոցիացիայի հետ համատեղ անցկացված գիտական հետազոտությունների բազմակողմ ծրագրերի աջակցության միջազգային մրցույթ	2019 թ. նոյեմբերին	24	2	Ֆինանսավորումն սկսվել է 2020 թ. նոյեմբերից
2020 թ. կազմակերպված մրցույթներ				
Միջազգային մրցույթներ				
1. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020» մրցույթ	փետրվար	190	**38**	Ֆինանսավորումն սկսվել է 2021 թ. հունվարից
2. «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների մասնագիտություններով օտարերկրյա գործընկերոջ ընդգրկմամբ գիտական թեմաների հայտերի մրցույթ	մարտ	75	17	Ֆինանսավորումն սկսվել է 2020 թ. սեպտեմբերից
3. «Արցախի հետ համագործակցության ծրագիր-2021» մրցույթ	սեպտեմբեր	5		Հայտերը փորձաքննության փուլում են
4. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳՀ-ՀՀԲՀՀ-2021» մրցույթը:	սեպտեմբեր	31		Հայտերը փորձաքննության փուլում են
Ներպետական մրցույթներ				
1. Երկակի նշանակության ծրագրերի աջակցության մրցույթ:	փետրվար	49	10	Ֆինանսավորումն սկսվել է 2020 թ. հուլիսից
2. «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2020» մրցույթ:	մայիս	32	11	Ֆինանսավորումը տրամադրվում է 2020 թ. սեպտեմբերից, 12-36 ամսով:

3. Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի հայտերի մրցույթ	մայիս	19	6	Ֆինանսավորումը տրամադրվել է մասնավոր հատվածից կամ արտաբյուջետային միջոցներից 25% համաֆինանսավորման սկզբունքով, 2020 թ. սեպտեմբերից, տևողությունը 24 ամիս է:
4. «Արհեստական բանականություն և տվյալագիտություն», «Քվանտային տեխնոլոգիաներ», «Ռոբոտատեխնիկա» մասնագիտություններով գիտական թեմաների հայտերի մրցույթ	հունիս	24	7	Ֆինանսավորումն սկսվել է 2020 թ. նոյեմբերից, տևողությունը 36 ամիս է:
5. Կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթը:	հուլիս	50	15	Ֆինանսավորումը տրամադրվում է 2020 թ. դեկտեմբերից, 36 ամիս տևողությամբ, 4-5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի:
6. Գիտական խմբերի մեկնարկի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ:	հուլիս	14	8	Ֆինանսավորումը տրամադրվում է 2020 թ. հոկտեմբերից, 36 ամիս տևողությամբ, 4-5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի:
7. Գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ:	հուլիս	15	11	Ֆինանսավորումը տրամադրվում է 2020 թ. հոկտեմբերից, 36 ամիս տևողությամբ, 4-5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի կամ լաբորատորիաների:
8. Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթ:	օգոստոս	42	11	11 հայտերից 7-ը ֆինանսավորման է երաշխավորվել ՀՀ 2020 թ. պետական բյուջեով «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» իրականացման նպատակով նախատեսված ֆինանսական ծավալների շրջանակներում:
9. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթ:	2021 թ. դեկտեմբեր			Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2021 թ. փետրվարի 12-ն է:

3. Ընթացիկ գործունեություն

3.1. Կազմակերպվել է Արցախի գիտական կենտրոնից ներկայացված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների 2020 թ. հայտերի գիտական փորձաքննությունը, որի արդյունքները տրամադրվել են ԱՀ ԿԳՄ նախարարին:

3.2. Կազմակերպվել է 2019-2020 թթ. Հայտարարված մրցույթների հայտերի առցանց հավաքագրումը, գիտաչափական վերլուծությունը և գիտական արդյունքների նույնականացումը: Փորձաքննություններն իրականացվել են 243 փորձագետների և մասնագիտական փորձագիտական խորհուրդների ընդգրկմամբ:

3.3. Կատարվել են Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական արդյունքների ներմուծման առցանց համակարգի (www.orgs.scs.am/) մշակման աշխատանքները: Համակարգի շնորհիվ ստեղծվում է գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ լիարժեք բազա, որը հիմք է հանդիսանալու դրանց գործունեության արդյունավետության գնահատման և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում իրականացնելու համար:

3.4. Իրականացվել է 2019 թ. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված 97 կազմակերպությունների և բուհերի աշխատակիցների վերաբերյալ տվյալների հավաքագրում և մշակում, ստեղծվել է համապատասխան շտեմարան, որը 2020 թ. դեկտեմբերի դրությամբ պարունակում է 5963 գիտական և վարչական աշխատակիցների մասին տվյալներ: Գրանցված գիտաշխատողների թիվը 3886 է, որից դոկտորի գիտական աստիճան ունեն 638-ը, իսկ թեկնածուի գիտական աստիճան՝ 1883-ը, վարչական աշխատակիցների թիվը 2077 է:

3.5. Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի՝ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստանալու նպատակով քննարկվել է 247 քաղաքացու հայտ, որոնցից 160-ը ներկայացրել են փաթեթ մագիստրոսական, իսկ 87-ը ասպիրանտական ծրագրերում ուսումը շարունակելու համար:

3.6. Ստեղծվել և վարվում է 2020 թ. գիտական աստիճանի համար հավելավճար ստացողների շտեմարան, որը 2020 թ. դեկտեմբերի դրությամբ պարունակում է 484 դոկտորի և 1367 թեկնածուի մասին տվյալներ:

3.7. Կոմիտեի կողմից 2020 թ. ընթացքում իրականացվել է գանձապետական համակարգի միջոցով գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների ֆինանսավորում, հաշվետվությունների ընդունում և հանձնում:

3.8. Կազմակերպվել է Կոմիտեում քաղաքացիների ընդունելությունը (137 քաղաքացի, այդ թվում 116-ը՝ նախագահի, 21-ը՝ նախագահի տեղակալի մոտ): Քաղաքացիներից ստացվել է 38 դիմում, բողոք և առաջարկություն, բոլորին տրվել է պարզաբանում:

3.9. Կոմիտեի քաղաքացիական ծառայության թափուր և ժամանակավոր թափուր պաշտոններն զբաղեցնելու համար 2020 թ. ընթացքում սահմանված կարգով կնքվել է 10 ժամկետային աշխատանքային պայմանագիր, կազմակերպվել և անցկացվել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար 17 մրցույթ:

4. Միջազգային համագործակցություն

4.1. Հունվարի 29-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատվել է ՀՀ գիտության կոմիտեի կողմից մշակված «Եվրոպական հետազոտական տարածքում Հայաստանի Հանրապետության հետազոտությունների և մշակումների բնագավառի ինտեգրման ճանապարհային քարտեզը», որով սահմանվում են Եվրոպական հետազոտական տարածքում Հայաստանի Հանրապետության ինտեգրման թիրախային ոլորտները, իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

4.2. Փետրվարի 10-ին ՀՀ գիտության կոմիտեի և Կյանքի շտրիխ կոդավորման միջազգային կոնսորցիումի (iBOL) միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիրը, որի շրջանակներում Հայաստանը դարձել է կոնսորցիումի անդամ: Շարունակվել է ՀՀ անդամակցությունը ԵՄ Հորիզոն 2020 գիտության և նորարարության շրջանակային ծրագրին, Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտին և այլ կառույցներին:

4.3. 2020 թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ հայաստանյան գիտական խմբերի մասնակցությամբ ԵՄ Հորիզոն 2020 շրջանակային ծրագրին ներկայացվել են 281 հայտեր, որոնցից վավեր են ճանաչվել 246-ը և ֆինանսավորման են երաշխավորվել 35-ը: Ասոցացված երկրների շարքում Հայաստանի մասնակցության հաջողության գործակիցը 12,60 տոկոս է: Ծրագրին հայաստանյան 43 մասնակից կազմակերպությունների ցանկը գլխավորում են Երևանի պետական բժշկական համալսարանը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մի շարք ինստիտուտներ, Երևանի պետական համալսարանը, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանը, ինչպես նաև Հայաստանի Ամերիկյան համալսարանը, մի շարք գերատեսչություններ և այլ կազմակերպություններ:

4.4. Սեպտեմբերի 14-ին Եվրոպական հանձնաժողովի գիտության և նորարարության հարցերով գլխավոր տնօրինություն է ներկայացվել «Հորիզոն Եվրոպա» գիտության և նորարարության Եվրոպական Միության հաջորդ շրջանակային ծրագրին ՀՀ ասոցացման հայտը: «Հորիզոն Եվրոպա» ԵՄ շրջանակային ծրագիրը ԵՄ «Հորիզոն-2020» շրջանակային ծրագրին հաջորդող ԵՄ նախաձեռնությունն է, որի հիմնական ուղղություններն են՝ գիտության գերազանցությունը, գլոբալ մարտահրավերներն ու մրցունակությունը և նորարարությունները: 2020 թ. նոյեմբերից մեկնարկել են նախնական բանակցությունները՝ ծրագրին ՀՀ ասոցացման պայմանների շուրջ:

4.5. Մայիսին ԵՀ Միացյալ հետազոտական կենտրոնի (ՄՀԼ, JRC) տնօրինություն է ներկայացվել Խելացի մասնագիտացման ընդհանուր հարթակում Հայաստանի Հանրապետության մասնակցության հայտը: Ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ: Դեկտեմբերի 2-ին և 9-ին խումբը մասնակցել է ՄՀԼ-ի կողմից կազմակերպված «Developing Smart Specialisation Strategies in Eastern Partnership Countries» խորագրով խելացի մասնագիտացման ռազմավարության մշակման գործընթացին նվիրված առցանց սեմինարներին:

4.6. Շարունակվել են հայ-գերմանական համագործակցության շրջանակներում ԵՊՀ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի բազայի վրա ստեղծված համատեղ գիտահետազոտական լաբորատորիայի աշխատանքները:

4.7. Հունվարից մեկնարկել է հայ-չինական համագործակցության շրջանակներում ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի բազայի վրա ստեղծված համատեղ լաբորատորիայի ֆինանսավորումը:

4.8. Տրամադրվել են կարծիքներ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում մշակված և ընդունված հայեցակարգերի նախագծերի, գիտահետազոտական աշխատանքների իրականացման ծառայությունների ոլորտում համատեղ գործունեության ու վարչական համագործակցության մասին համաձայնագրերի և այլ իրավական ակտերի վերաբերյալ: